

ճրութեամբ կը նուազի և կու գայ լայնութեան 70 երորդ աստիճանին տակ դետնին հետ միանալու : Իրաւամբ է ուրեմն որ երկրագունտս հասարակածա յին երկու լեռանց նմանցուցին, որոնք իրենց առանցիցը վրայ պռուկած ու խաւրիսխ խարսխի կռթնած ըլլային, վասն զի հասարակածէն դէպ 'ի բեռն երթալով կամ հասարակածին վրայէն բարձրանալով՝ բարեխառնութեան մի և նոյն աստիճաններէն կ'անցնինք :

Բոյսերն ալ նոյն օրինաց հպատակ են . հասարակածին լեռանց ստորոտը կը տեսնենք արմաւենիները, քիչ մը ա-

ւելի բարձր՝ ձիթենիները, դեռ աւելի վերը՝ այգիները, քիչ մ'ալ վեր՝ ցորեններէնները, յետոյ անպտղատու ծառերը, լեռան գագաթին չհասած կը տեսնենք պղտի խոտերը, և բոյսերը կ'աներևութանան մշտնջենաւոր սառերուն տակ . Իսկ եթէ հասարակածէն դէպ 'ի բեռնները երթանք՝ նոյն բոյսերը աստիճանաբար կը տեսնուին ինչուան որ սառերուն հասնինք՝ ուր կանաչութիւնը նորէն կ'աներևութանայ :

Կը շարունակուի :

ԲԱՆՔ ԾԱՂԱԳՍ ԱՆՑՄԱՒՈՐ ՄԵԾՈՒԹԵԱՆ

Այր մի կայր եւ Շահնամայ ¹ արեւ ձայնով . նայ եղբարք խնդրեցին թէ 'ի Շահնամայի ձայն մեզ ռոտնուառոր արաւ . եւ շինեցի գրաւքս զսյա . 'ի Շահնամայի ձայն կարդացէք .

Յանուն անեղին Աստուծոյ եւ մեծին ,
 Յանուն Հօր եւ Որդւոյն որ է միածին ,
 Յանուն ճշմարիտ սուրբ Հոգւոյն յաւիտեան ,
 Որ մի տէրութիւն է հզօր ի յատեան .
 Սկսայ բան խօսիլ հասարակ սիրելեաց ,
 Բանալ ձեզ դրունք ի մտաց սքանչելեաց ,
 Շարել մարգարիտ ու ակունք լուսատու ,
 Յուցանել գեղեցիկ ձեզ բաներ խրրատու ,
 Լըսել պարտ է մեզ բանք յիմաստասիրաց ,
 Կամաւ հեռանալ մեզ ի զատ յանգիտաց ,
 Չլինել կարճամիտ եւ ի սրբտէ թերի ,
 Չլինել մարմնոյն մեր ծառայ եւ գերի :
 Այս կեանքս է ունայն եւ ժառանկք ենք մահու ,
 Չունի մեզ դրունք բարութեան եւ շահու .
 Երազ է խաբող եւ խայալ ² անցաւոր ,
 Է սուտ սիրելի եւ ընկեր նենգաւոր .
 Յուցնէ մեզ սիրու դուռն ու տայ շատ նիշան ,
 Բայց է ի ծածուկ գազանի պէս ու շան .

¹ Ֆիրտուսի Պարսիկ բանաստեղծին վեպասա- նութիւնն է :

² Երևոյթ , աչքի ցուցանք (արաբերէն) :

Նստեալ է սաղիսայ¹ ի մեծ ջամիաթ²,
Հանեալ զիր ոչինչ սուտ բաներն ի դիմաթ.

Չգինին որ բաժնէ՝ կայ ի ներս մահու դեղ.
Ոմանք որ խմեն՝ արբենան ցեղուցեղ.

Հողուով են մեռած ու թըւին կենդանի.

Ով որ ինք³ խմել յայն գինուն շիշանի.

Սարիսոյ⁴ են դարձել սրտերովն ի մուրատ⁵
Ընգել են բեռամ ծանդեր՝ ի մեծ գէշ մօրադ⁶
Չունին աչք մըտաց, ոչ հային աստ եւ անդ,
Չգիտեն թէ կապել կան ի յերկաթ ւ՛ի բանդ:

Հասեալ են ի դուռն ի մահուն բէխապար⁷,
Չգիտեն թէ խորել են ի ծով զերդ կապար.

Անուշ պարարին զերդ զանասուն յիմար,
Ի ի ներքեւ ցաւով կան ի լի ւ են բիմար⁸:

Այսօր կան յորդոր եւ զյեգուց չանդիճեն,
Որ լան արտասուօք եւ ահեղ հառաչեն.

Ահա մահըն դայ եւ գտնու շատք ի քուն,
Չմնայ յինք ի մօտ իրք ծածուկ կամ թագուն:

Ի հուքմ ինք ունի շատ թաճով⁹ փատիշահ.
Ու փոքր ու¹⁰ դան ւ ի չահ¹¹

Տանի զամեն մարդ, յիր մուրատէն գերի,
Հանց որ ի շատոց սիրտ անշէջ հուր կ'երի:

Չթողու ինք սուլտան ոչ փատիշահ ի թախթ,
Առնու շատ դովաթ՝ թէ հզօր է անյաղթ¹².

Չվախէ ի զօրաց՝ թէ են քաջ փահլաւան¹³
Շուտով թէզ¹⁴ հողոյն առնէ զիրենք հաւան:

Թէ լինի հզօր փատիշահ զերդ Ղազան¹⁵,
Չմնայ՝ քանի է ինք սրտով զերդ գազան:

Չայն ոք որ սուրաթով լինին գեղեցիկ՝
Քաղէ զերեսին գոյնն՝ որ է զերդ ծաղիկ:

Ոչ մնայ այն որ է ինք անձամբ վայելուչ,
Ոչ այն որ է տրտում կամ սրտովըն հուչ:

1 Հանգիստ, առողջ:
 2 Բազմութեան մէջ:
 3 Ով որ կամ ամենքս ալ խմեր ենք այն գինուցն շիշերէն:
 4 Գինով:
 5 Կարօտած, փափագով:
 6 Ցեխ, կոնուր, պալլէֆ:
 7 Պիտուիք (պարսկ.) առանց խմանալու. յան կարծ:
 8 Պիմար (պարսկ.) հիւանդ:
 9 Թագ:

10 Օրինակը աւրուած էր:
 11 Չէ (պարսկ.) ջրհոր:
 12 Թէ և մէկն շատ ուժով ըլլայ՝ անոր ունեցածն ալ կ'առնու (մահն):
 13 Կարիճ կռուող, բմբէշ:
 14 Շուտ մը:
 15 Հէլազու զանին ցեղէն իջած Պարսից և Հայոց վրայ իջնող զանն էր, Քրիստոսի 1292-1304 թուին, և մեր հեղինակին ժամանակակից ըլլալով՝ զսուր յիշէ ուրիշ մեծազօր աշխարհակալաց տեղ:

Այն անձն որ վայել լինի շատ բարութիւն՝
Մտէ ինք ի նեղ բանդ և ի շատ գերութիւն .

Այն որ հագանէր ինք հանդերձ ոսկեկար ,
Շարած յիր վերայ էր մարգարտով շքար ¹ ,
Հիմի հաւանել է ի միտ տակ ² քաֆան ³ ,
Լուել է իր շատ քիպր ⁴ ու ջալր ⁵ ու ջաֆան ⁶ :

Այն որ տուն ունէր զարդարած եւ տաճար ,
Շինած ամեն ոսկով ու նախ ի նիգար ⁷ ,
Ունէր թաճ ակամբք , ու իր կար թախթ ի զառ ⁸ ,
Հիմի է ի խոր մննացել բէխապար :

Այն ոք որ բոլոր աշխարհիս տէր եղան ,
Սուլտան ու թագաւոր փատիշահ ու դան՝
Ունին գանձ անթիւ ու հեծել բէշրմար ⁹ ,
Շուտով յայն փառացն եղեն զէր ու զապար ¹⁰ :

Շատոց վերանայ հուքմ ¹¹ ու թուղթ ու զալամ ¹² ,
Շատոց խափանի յատ ¹³ ու տապ ¹⁴ ու յալամ ¹⁵ ,
Այն ոք որ էին քաջք ու յաղթող ի մարտ ,
Էին աննրմանք ի հեծելոց ի յարտ ,

Խաղին ¹⁶ թուր ու ըռումբ ու գուզով ¹⁷ զհետ իրաց ¹⁸ .
Հիմի այլ չկայ տիպ ոչ տես պատկերաց .
Ոչ հեծնուն ի ձի , ոչ գահեն ¹⁹ մուրատով ,
Ոչ այլ գեղեցիկ երեւին սուրաթով :

Քակին շատ ազվոր անձն որ էր յարմարած ,
Ու շատ ջօհարէ ակունք որ են շարած :
Այն ոք որ էին ի յերկրի խիստ նազով ,
Էին պատկերաց տէր ²⁰ ու դեղձան մազով ,

Էին սուրաթով զերդ լուսին ցանկալի ,
Սրտով խիստ ուրախ ու խօսօք գանգալի ²¹ ,
Երեկ արտմութիւն հանց ²² նոցա եւ տարան ,
Որ ոչ աչք ունին ոչ լեզու կամ բերան .

1 Դնէք , զարդ :

2 Անծալ , մէկ կարգ , պիւր գաւ :

3 Քեֆն , Պատանիք :

4 Հպարտութիւնն :

5 Զրկանք :

6 Զարչարին :

7 Կապու ինիլեար , Պէսպէս նկարուած , խատու-
տիկ :

8 Ոսկեղէն գահ ունէր :

9 Պիւր-մար , անհամար :

10 Զէր . ու դեղեր , վերու-վայր :

11 Իշխանութիւն , հրաման տալն :

12 Թուղթ ու գրիչ (գատաւորաց) :

13 Թիկունք , օգնութիւն :

14 Թապ , թմբուկ :

15 Կշանք փառաց , գրօջք :

16 Խաղային սրով և սքմբով :

17 Ատելութեամբ , կատաղութեամբ :

18 Իրարու հետ :

19 Զարնել :

20 Գեղեցկադէմ :

21 Կէնիլ (պարսկ.) կատակ :

22 Այնպիսի արտմութիւն եկաւ անոնց :

Դարձեալ են փոշի եւ ոսկերք են ցամաք,
 Այն անձն որ պայծառ էր քան զձիւն սպիտակ,
 Եղբայրք լսեցէք զայս ի սրտէ սիրով՝
 Որ ես շինեցի զբանքս ի մըտաց գըրով:
 Ոչինչ է այս կեանքս ու չունի դիւրութիւն.
 Դու այլ մի խաբիր, թէզ զարթիր կոստանդին,
 Յանուն անեղին Աստուծոյ եւ մեծին,
 Յանուն Հօր եւ Որդւոյն որ է միածին:

Մարկոս Արեւիտսիւն դէռ կայսր չե-
 դած առ Կլոդիոս ու Կլոդիա գրած
 բուշորը, որունք էրիկ կնիկ իր դը-
 րացիներն էին.

Մարկոս 'ի Մօնթէշելեայ' Կլոդիոսի
 և Կլոդիայ զբացիներուս շատ բարև:
 Իրաւցընէ դուք իմ բարեկամս ըլլալ-
 նիդ անկէց յայտնի է որ՝ ամեն Հոռ-
 մայէն եկողներուն զձեզ կը հարցընեմ,
 ու ամեն ասկէց գնացողներուն ձեզի
 իմ բարևներս կը խրկեմ: Իմ զձեզ սի-
 րելը՝ սրտերնուդ հարցուցէք. թէ որ
 աչքէ հեռու ըլլալս տարակոյս մը ձգէ
 սրտերնուդ մէջ, յուսամ որ մօտ եղած
 ատեն ըրած բարիքներս դուրս կ'ընեն
 սրտերնէդ առ տարակոյսը: Գայիտս բա-
 րեկամս՝ ձեր ազգականը՝ Աղէքսանդրիա
 երթալու համար ասկէց անցած ատե-
 նը շատ մը լուր բերաւ Հռոմայու վրայ.
 ասոնց հետ բան մըն ալ պատմեց, որուն
 վրայ առջի բերանը խնտալս եկաւ. իսկ
 երբոր աղէկ մը մտածեցի վրան, շատ
 տրտմեցայ: Վասն զի կան բաներ որ
 մէկէն կը խնտացընեն, բայց ետքը վը-
 րան մտածելուդ պէս՝ արտմութիւն ու
 վիշտ կը բերեն: Ամենքը ձեզ ծեր կը
 ճանչնան, բայց դուք զձեզ պատանոյ
 ու օրիորդի տեղ դրեր էք եղեր: Ըսաւ
 ալ որ կը հագուիք կը կապուիք կը զար-
 դարուիք եղեր նոր հարսի ու փեսի պէս.
 ու ձեր ծերութեանը յարգութիւն ը-
 նողներուն կը սրդողիք եղեր: Կառար-
 շաններու մէջ կը մտնաք եղեր, զբաւ

գնելով որ ձեր ձիերը ուրիշներունը
 կ'անցնին. Հռոմայու մէջ որչափ թե-
 թեութեան ու խեղկատակութեան բա-
 ներ որ կան, տներնուդ մէջը ամենն
 ալ անպակաս է եղեր. ու անանկ զձեզ
 զբօսանքի տուեր էք, որ կարծես թէ
 դեռ չէք ձանձրացեր, դեռ ծերութեան
 կը սպասէք որ ձանձրանաք: Իրաւ որ
 ես ձեր տեղը կ'ամբիջնամ կոր. ձեր ը-
 րածը ինծի վիշտ կ'ըլլայ կոր, բարե-
 կամ ու դրացի ըլլալնուս համար: Շատ
 մեղքեր կան, որ թէ և ծանր են, բայց
 մարդ կարեկից կ'ըլլայ ընողներուն հա-
 սակին նայելով. կան ալ որ թէ և այն-
 չափ ծանր չեն, բայց կը ծանրանան՝
 անմեղադիր ընելու կողմ մը չունենա-
 լով: Կ'երգնում որ ձեր ըրածին ոչ կա-
 րեկից ըլլալու և ոչ զձեզ անմեղադիր
 ընելու կողմ մը կը գտնամ, այլ ամեն
 դիէն դատապարտելու: Թողութիւն ը-
 րէք թէ որ խոհեմութիւն չեմ բանեցը-
 ներ կոր զբաժիս մէջ, բայց դուք ալ
 գործքերնուդ մէջը չէք բանեցըներ կոր:
 Չեմ ուրանար, ով Կլոդիոս, որ կտրիճ
 էիր, ու ուժիդ շատերը կը նախանձէին.
 դուն ալ ով, Կլոդիա, տեղքով էիր, շա-
 տերը քեզ կ'ուզէին: Բայց աս կը հար-
 ցընեմ որ մէկուդ կտրճութեան համար
 ու մէկալիդ աղորութեանը՝ քնչ տար-
 բերութիւն կը յուսաք ունենալու գե-
 րեզմանին ծակին մէջը: Ո՛հ, ան ատե-
 նը կ'իմանաք որ ժամանակը՝ առանց
 թեւերը չարժեղու կը թռչի եղեր, մար-
 դուս կեանքը առանց քարելու կը վա-
 զէ եղեր, բախտը առանց ձեռք չարժե.